ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/10Ծ-2

ք. Երևան «27» Հունվարի 2021 թ..

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19 000 000 (տասնինը միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման

և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900011018513 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղար Հ. Ղազարյան ---------- /Ստորագրություն/ Կ.Տ	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ Ք. Երևան 0009,Սարմենի 1, 2/1 տարածք «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Հ/Հ 163008180909 ՀՎՀՀ 01571846 Տնօրեն՝ Ա. Սարգսյան ---------- /Ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 27» Հունվարի 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/10Ծ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
2	79631200/505	Ստորև	դրամ	19 000 000	1	ք.Երևան, ՀՀ մարզեր	Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև ֆինանսկան միջոցներ նախատեսված տարվա՝ 2021թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին	Ծառայության անվանում	Տեխնիկական բնութագիր
2	***Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայություն***	1. Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքային ծառայողներին անհրաժեշտ է վերապատրաստել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» N 10-Լ հրամանով հաստատված ծրագրին, ինչպես նաև վերապատրաստումն անցկացնող կազմակերպության կողմից կազմված և պատվիրատուի հետ համաձայնեցված պլան-գրաֆիկին համապատասխան: 2. Վերապատրաստում անցկացնող կազմակերպությունը՝ 1) պետք է ունենա մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանն ուղղված միջոցառումների կազմակերպման (վերապատրաստման և (կամ) սեմինարների անցկացման) և (կամ) բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման ոլորտի առնվազն երեք տարվա փորձ. 2) վերապատրաստման գործընթացում ներգրավված դասախոսները պետք է ունենան բարձրագույն կրթություն, ինչպես նաև ՀՀ պետական մարմիններում կամ ուսումնական հաստատություններում կամ հայեցողական պաշտոններում կամ համայնքների աշխատակազմերում ստորաբաժանումների ղեկավարների պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ և դասախոսություններ կարդալու փորձ. 3) համայնքային ծառայողների վերապատրաստումը պետք է իրականացնի համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներից ստացված հայտերի հիման վրա՝ վերապատրաստվող համայնքային ծառայողների անմիջական մասնակցությամբ. 4) համայնքային ծառայողների վերապատրաստմանը ներգրավված դասախոսների ցուցակը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ. 5) վերապատրաստման ծրագրի թեմաների համար նախատեսված ընդհանուր ժամաքանակների շրջանակներում պետք է

		կազմի և պատվիրատուի հետ համաձայնեցնի տեսական և գործնական ժամաքանակները. 6) պետք է կազմի և պատվիրատուի հետ համաձայնեցնի վերապատրաստման ծրագրի թեմատիկ բաղադրիչները (մոդուլները). 7) վերապատրաստումը պետք է անցկացնի խմբերով, որոնք պետք է կազմված լինեն առավելագույնը 20 համայնքային ծառայողներից. 8) յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն երկու օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման վայրի և ժամկետների մասին. 3. Վերապատրաստվողների ընդհանուր թիվը կազմում է 1500 համայնքային ծառայող: 4. Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստումը պետք է անցկացվի ՀՀ համապատասխան մարզկենտրոններում կամ նախկին շրջկենտրոններում կամ այլ համայնքներում՝ ելնելով համապատասխան համայնքների աշխարհագրական դիրքից և այլ օբյեկտիվ պայմաններից: 5. Վերապատրաստումը պետք է իրականացվի առնվազն 20 հոգու համար նախատեսված ընդարձակ, լուսավոր, կահավորված լսարանում, որը պետք է հագեցած լինի դասընթացի համար պահանջվող միջոցներով (պրոյեկտոր, համակարգիչ, ֆլիպչարտ, գրատախտակ, գրենական նյութեր և այլ անհրաժեշտ նյութեր): 6. Վերապատրաստում անցկացնող կազմակերպությունը պատվիրատուի հետ պետք է համաձայնեցնի վերապատրաստված համայնքային ծառայողներին տրվող ավարտական փաստաթղթի (վկայականի) նմուշը և համարակալումը, որը պետք է լինի չկրկնվող համարներով: Վերապատրաստված են համարվում համապատասխան հայտերով դասընթացներին մասնակցած այն համայնքային ծառայողները, որոնց բացակայությունը չի գերազանցել վերապատրաստման ընդհանուր դասաժամերի (72 ժամ) 1/3-ը: **7. Պատվիրատուի կողմից վճարումներն իրականացվելու են վճարման ժամանակացույցին համապատասխան՝ ըստ փաստացի վերապատրաստվածների թվի (պատվիրատուին ներկայացվում է յուրաքանչյուր խմբի մասնակիցների հաճախելիության մասին թերթիկը):** **ԾՐԱԳԻՐ** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ***Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը 44 ժամ*** • Համայնքապետարանի աշխատակազմը՝ իբրև կառավարչական հիմնարկ, բյուջետային հիմնարկները, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները և դրանց հետ հարաբերությունները կարգավորող իրավական հիմքերը • Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման մեխանիզմները • Համայնքի զարգացման ծրագիրը • Համայնքի բյուջեն՝ բյուջեին ներկայացվող պահանջները, համայնքի բյուջեի կազմումը (եկամուտների և ծախսերի մեթոդաբանությունը, եկամուտների աղբյուրները և դրանց իրավական հիմքերը), բյուջեի քննարկումը և հաստատումը, լուսաբանումը • Հողի հարկի և գույքահարկի բազաների վարումը և համայնքի ղեկավարի կողմից հսկողությունը • Պետության կողմից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայի հաշվարկի համար ներկայացվող ցուցանիշների հավաստիությունը

- Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում, այդ թվում՝ տեղական հարկերի ապառքների հավաքագրումը
- Գնման գործընթացի պատասխանատուները, գնումների պլանավորումը, գնման ընթացակարգերի կազմակերպումը, պայմանագրերի կատարումը և նախնական հսկողության իրականացումը
- Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ ըստ բնագավառների, լիազորությունների ընդհանուր բնութագիրը
- Համայնքային սոցիալական աշխատանքի նպատակները և խնդիրները
  Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները՝ ըստ առանձին իրավախախտումների տեսակների
- Համայնքի սեփականության և գույքային այլ իրավունքները, պայմանագրերից ծագող պարտականությունները
- Առևտրի և ծառայությունների ոլորտում թույլտվությունների տրման և հսկողության իրականացման մեխանիզմները, այդ թվում՝ համապատասխան առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների նկատմամբ
- Ժամկետներ և հայցային վաղեմություն (այդ թվում՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցման, հայցային վաղեմության ժամկետի վերականգնման) հասկացությունները և կիրառման իրավական հիմքերը
- Համայնքի նկատմամբ պարտավորությունների կատարումն ապահովող միջոցառումները (այդ թվում՝ վճարման կարգադրություն, բռնագանձում և այլն)
- Նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը
- Տեղական ինքնակառավարման և պետական մարմինների փոխհարաբերությունները
- Իրավական և մասնագիտական հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ
- ՀՀ տարածքում ենթակառուցվածքների զարգացման դերն ու նշանակությունը: ՀՀ պետական աջակցությունը՝ նպատակաուղղված ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը
- Աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի՝
  - օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը
  - ներկա իրավիճակը
  - ոլորտում իրականացվող ծրագրերը
  - թափոնների վերամշակման հնարավորությունները

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք
6 ժամ

- Նորմատիվ իրավական ակտերի տեսակները
- Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը
- Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումը
- Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը և ժամկետները
- Օրենսդրական տեխնիկայի կանոններ
- Նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը
- Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելը
- Նորմատիվ իրավական ակտերի գործողությունը կասեցնելը և դադարեցնելը

Համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրություն
8 ժամ

		• Համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության ինքնուրույն տեսակ • Համայնքային ծառայության մասին օրենսդրության հիմնական կարգավորումները • Համայնքային ծառայության համակարգի զարգացման միտումները ***Կառավարչական հմտություններ*** ***14 ժամ*** • Միջանձնային հարաբերություններն աշխատավայրում • Գործնական շփում, դրա դերը, մակարդակը և ձևերը • Ժամանակի ռացիոնալ օգտագործման և սեփական պլանների իրագործման տեխնոլոգիաներ • Վերադասի հետ փոխհարաբերությունների կառավարման տեխնոլոգիա • Գործարար վարքաձև, գործուն լինելու հատկանիշներ • Հաշվետվության ներկայացում: Նվերները միջանձնային գործնական հարաբերություններում • Դժգոհ մասնակիցների հետ աշխատանքի մեթոդները • Բարեվարքություն (էթիկա) հասկացությունը • Կոռուպցիա հասկացությունը և տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիայի ընկալման մակարդակը • Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը • Ինչ է տեղեկատվությունը և տեղեկատվության ազատությունը • Տեղեկատվություն ստանալու և տրամադրելու եղանակները • Տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը • Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի շահագործումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը • Գործավարության և փաստաթղթաշրջանառության կազմակերպումը:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Թադևոսյան

_____
/ստորագրություն/
L.S.

ԿԱՏԱՐՈՂ

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
Ք. Երևան 0009,Սարմենի 1, 2/1 տարածք
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն Ա. Մարգսյան

_____
/ստորագրություն/
L.S.

Հավելված N 2
«27» Հունվարի 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/10Ծ-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	79631200/505	Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բասոյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
Ք. Երևան 0009,Սարմենի 1, 2/1 տարածք
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/